ՆՈՐ-ԴԱՐ

№ 37. Ա. ՌՈՒՍԻՆ ՏԱՐԻ Հ՚աբաթ 3 Մարտի **1884** Հ՚աբաթ 3 Մարտի Ա. ՌՈՒՍԻՆ ՏԱՐԻ № 37.

Տարեկան՝ 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Առաձ՚ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում՚ն Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։

Խմբագրութիւնն հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
или Titlis, Rédaction „Nor-Dar“.

Թերթը բայ է ամեն օր (բացի ուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում՚ն ամեն լիզունելով։ Յայտարարութեան վճարը բառին 2 կ. տիկամիների համար՝ կրկնապատիկ.

Նիկողայոս Նիկողայոսեան Շանշեան և Պետրոս Սամօյլեան Շանշեան ցաւօք սրտի յայտնում են, առաջինը—իւր ծնողի, իսկ իրկրորդը իւր հարազատ եղբօր ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍԱՄՕԵԼԵԱՆ ՇԱՆՇԵԱՆԻ մահուան լուրը, որը վախճանել է Փետրվարի 24-ին Պետերբուրգում։ Ուստի խոնարհաբար խնդրում են հանգուցեալի բոլոր ազգականներին և ծանօթներին չնորհ բերել, կիւրակի Մարտի 4-ին, առաւօտեան ժամը 11-ին ներկայ գտնուելու հոգեհանգստեան պատարագին, որը լինելու է Մաղնու Ս. Գէորգ եկեղեցում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդական.—Տեղական հայ մամուլը—Ք ր ո ն ի կ ո ն.—Մշակ լրագիրը.—Փայտաշէն խրճիթ.“ Վարդ. ասոր Իզմիրում Դատաս. կարգ. փոխոս.—2400 ֆ. Նամիմ. յաջող.—Կիւրակ. ուսում. Շուշանյրում.—Մըխոտոս. վաճառ. ժամանակ նենդութիւն. Պառամ. ընար. Պահպանութիւն.—Թղթակցութիւններ.—Դրպասակից և Բաժին-Պրօմպտյոյ։—Ռազմական.—Քաղաքական լուրեր.—Հեռագրեր։—Առևտրական.—Տիկնիկատուն։ — Յայտարարութիւններ։—Բանասիրական.—Փոստի և ծանրապատուհասութիւն։

Թիֆլիս, 2 Մարտի 1884.

ՏԵՂԱԿԱՆ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Վերջին օրերումս «Մշակ»-ի մենօրեայի տեղ շաբաթը երկու անգամ հրատարակուելու յայտարարութիւնը և նոյն թերթի առաջնորդողը, որի մէջ խմբագիրը լետ էր պահանջում ընթերցողներից թերթի հրատարակութեան համար կրած նիւթական վհասները, մեր տեղական ռուս մամուլի քննութեան նիւթ են դառել։

Տեղական ռուս մամուլը տեղի, թէ անտեղի դիտողութիւններ է անում այդ մասին, մինչև անգամ զուարճացնում է նրան «Մշակ»-ի խմբագրի կատարած այդ քայլը։

Մեկը ասում է, որ «Մշակ»-ը հատոյ առնելով տարեկան 5 րուբլի է անում, ուրեմն լուծանորդ գրուելով 10 րուբլի վճարել՝ նշանակում է կրկնապատիկը վճարել։ Միւսը չէ ուզում հասկանալ թէ՝ ինչպէս կարող է «Մշակ»-ը բաժանորդավճարներն առոնալ և երբ թերթի համարներն պակասեցնում է, չը վերադարձնել ստացած գումարներն բաժանորդներին։

Ի հարկէ, իրաւունք կար ասելու, որ «Մշակ«-ը այդպէս չը վարուէր, որ այն ինչ որ «Մշակ»-ը փետրվարին է ասում, կարող էր ասել անցեալ դեկտեմբերին, և աւելի լաւ ասել։

Զենք կարծում, որ այդպիսով թերթը վնասուէր։

Բայց եղածը եղել է։ Մի մեծ բան էլ չէ 10 րուբլին, երբ այդ գումարը վճարվում է հայոց մի թերթին, որը շաբաթը երկու անգամ է դուրս գալիս։

Բայի այդ, կարծում ենք, որ հայոց թերթի մի խմբագիր, որը իւր բոլոր թերութիւններով հանդերձ՝ գիշեր ցերեկ մտածել է իւր հասկացածին պէս և իւր մտաւոր կարողութեան համեմատ ծառայել հասարակական շահերին, այդպիսի մի խմբագիր, կրկնում ենք, իրաւունք ունի սպասելու, որ ընթերցող հասարակութիւնը նրա հետ մի փոքր աղաւարի, մի փոքրը քնքշաբար վարուի։

Եթէ պ. Արծրունուն յատուկ է մասնաւորը ընդհանրացնել, իւր ցաւը ամենի ցաւ համարել, գըրգռելով ամբողջ ազգին հայհոյել կամ հանդարտ ժամանակը ազգի գլուխը շոյել, այդ չէ նշանակում, որ ընթերցող հասարակութիւնը այսօր «Մշակ»-ի վերայ գլուխ պէտք է պատռէ։

Թող միայն յիշէ Արծրունին, որ աշխարհս լայն է, ու օրերին հեռւում են լոյս օրեր, որ կեանքումը ուրախ ժամեր էլ են լինում, տխուր ժամեր էլ, որ դըժբաղդութիւնը ամենքին է վիճակուած, որ Հարկ չը կար անցեալ տարի խրոխտ լեզուով ծաղրելու «Մեղու»-ին... Թող այն էլ իմանայ նա, որ կեանքում նեղութիւն չը կրած, չը խափուած և չը գըրկուած մարդը միշտ մի մեծ ելեխայ է մնում, որքան էլ երկար ապրէր նա։

Ուստ թերթերը այդ առիթով անկողմնակի կերպով հարուածում են հայ հասարակութիւնը, հայ ժողովուրդը, առանց որ իրենք այդ անելու մտածում լինէին։

Այդ մասին և մեր հայոց մամուլի մասին մեր խորհրդածութիւններն ուրիշ անգամի թողնելով, մենք ուզում ենք այժմ «Մշակ»-ի առիթով ռուս մամուլի մի դիտողութեան վերայ դարձնել մեր ուշադրութիւնը։

Ուստ մամուլը «Մշակ»-ի անլայողութեան գլխաւոր պատճառը թերթի վատ խմբագրուած լինելն կամ առաջնորդողների պակասութեանը չէ վերագրում, ընդհակառակն՝ նա կարծում է, որ թերթը լաւ է խմբագրուած եղել, այլ անլայողութեան պատճառը գտնում է նրա մէջ, որ՝ իբրև թէ՝ տեղական մամուլը «արուեստական» է։ Պարզ լեզուով թարգմանած՝ ուզում է ասել, որ հայերը հայերէն թերթ կարդալու կամ ստանալու պահանջ չեն զգում։

Եթէ «արուեստական» բառը անխըտիր գործածուէր ընդհանրապէս բոլոր տեղական թերթերը նայ նա, որ ասածը մեծ մասամբ ճշմարիտ է։ Բայց ուստ մամուլը ի նկատի առնելով և ամբողջ կովկասի բնակիչների վերաբերմամբ, այն ժամանակ մենք այսպէս կը հակառնայինք. որովհետև Կովկասի բնակիչներն՝ ռուս, հայ, վրացի և այլն գեռ զարգացման մէջ շատ առաջ չեն գնացել և ընթերցասիրութիւնը այնպէս չէ տարածուած դրանց մէջ ինչպէս, օրինակ, մի որ և է եւրոպական երկրում, ուստի՝ մամուլի պահանջը գեռ այնպէս չէ զգացվում, և այդպիսով թերթերը իրենց ծախքերի համեմատ եկամուտ չունենալով, վնասվում են։

Եթէ ռուս մամուլը «արուեստական» բառը այդ մտքով գործ ածէր, այն ժամանակ, ոչինչ չունէինք ասելու։ Բայց որ «արուեստական» բառը առանձնապէս հայոց համար է գործածում, մենք այդ լաւ չենք հասկանում։

Մի թէ մի ևնայն մտքով, ինչ մտքով որ «արուեստական» բառը ռուս մամուլը գործ է ածում հայոց մամուլի վերաբերմամբ, չէ կարելի գործածել և միւս տեղական ռուս, վրացի և այլն հրատարակութիւնների համար։

Եթէ հայոց մի որև է թերթ պատահմամբ մի խմբագիր ստանար 4000 րուբլի օժանդակութիւն և ապահոված յայտարարութիւններով —սա «արուեստական» չէր լինիլ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԳԻԿ ԵՒ ՆԱԳԿԱՊԱՏՈՒԱՍՈՒԹԻՒՆԸ

Ի նկատի առնելով Կովկասի զանազան կողմերում յաճախ պատահող ծաղկի հիւանդութիւնները՝ անհրաժեշտ և հետաքրքիր ենք համարում ձգել հաւանոյքին մի հայացք այս հիւանդութեան պատմութեան վերայ և այն միջոցների վերայ, որոնցով մարդ պատերազմում է նրա դէմ։

Չը նայելով որ բժշկական գրականութեան մէջ օրից օր աւելի յաճախ երևում են հակառակախօսութիւնները առհասարակ ծաղկապատուաստութեան դէմ, բայց և այնպէս հաւանի թէ նրա հակառակորդներին կ՚յաջողուի վանել գործադրութիւնից այս պահպանողական և մեծագործ միջոցը մարդկութեան ամենասարսափելի պատուհասներից ծաղկի մէկի դէմ։

Ծաղիկը արդէն յայտնի է եղել ամենքին հնութիւնից ի վեր։ Մուրը, օրինակի համար, ասում է, որ այս հիւանդութիւնը գոյութիւն է ունեցել Չինաստանում և Հնդկաստանում, Քրիստոսից գեռ 1200 տարի առաջ։ Աֆրիկայում ծաղիկը համարուել է մերձաւոր (своя) հիւանդութիւն ամենահնադոյն ժամանակներից ի վեր. իսկ պատմութիւնից մենք լսանում ենք, որ ծաղիկը անընդհատ կոտորում էր Աղեքսանդր Մակեդոնացուց զօրքը։

Մեզ մօտ—Եւրոպայում տարածուած հիւանդութիւնը (эпидемія) վերաբերում է 570 Թուականին։ Հիւանդութեան սերմնարանը աւհասարակ ընդունուած է համարել Կենտրոնական Ասիան։ Խաչակիրը զօրքերի ժամանակները ծաղիկը բերին մեզ մօտ Սարացինները (մուսուլմաններ և արաբները) Աբիսսինիայից կամ Եգիպտոսից։ Ծաղիկը մինչդամ Եւրոպայում երևեցաւ թէ չէ՝ սկսեց կատարել սարսափելի աւերումներ։ Մինչև դարերում նրանից մեռնում էր 300-ից մինչև 400 հազար մարդ։ Մի քանի տարեգիրների կարծիքով՝ նա աւելի կործանարեր է քան նոյն իսկ ժանտախտը։ Պրուսիա՝ Փարիզի բժշկական դպրոցի առողջապահութեան յայտնի պրոֆեսորը ասում է. Տասն և եօթներորդ դարումը և տասնուվեցերորդ դարու սկզբումը ծաղիկը ընդունեց ընդհանուր Քրիստոնէութեան վերքին աստիճանի չափեր։ Լուդովիկոս XIV-ի ամբողջ սերունդը (բացի Հնգամեայ մանուկ XV Լուդովիկոսից) մեռաւ ծաղկից ամենակարճ ժամանակի ընթացքում։ Պէտք է կարդալ ժամանակակիցները — օրինակ Հենց Սէն-Սիմոնի-օրագրերը տեղեկանալու համար, թէ նրանք ահա ազգաբնակութեանը։ Իսկ եթէ մէկը բարեբաղդաբար, թէ տարաբաղդաբար, յաջողւում էր սրճնել մահուան ճանկերից՝ նա ամբողջ կեանքում մնում էր այն աստիճան ազդեցած, որ ամենամերձաւոր բարեկամներն ու ծանօթներն անգամ չէին կարողանում ճանաչել նրան։ Այս պարհասուրելի հիւանդութիւնը մնակերպ դիմութեամբ հարուածում է, կոտորում է ամեն հասակի-կազմուածքի մարդկանցին, մանուկից սկսած մինչև պատասխանը. նա չի խնայում մայրական արգանդի մէջ ապատամնուած սերմն անգամ. նա հեղաւութեամբ կոչում է ամեն ազգերի ամեն ցեղերին։ Ամերիկայում և Մեկսիկում նրա արագընթաց տարածութիւնը ծառայում է իբրև անհերքելի ապացոյց։ Երեք ու կէս միլիոն բնակիչ կորաւ առաջին անգամ ծաղկի ժանտախտից, և յետոյ, հետևեալ էպիդեմիայի ժամանակ—մինչև 800,000 մարդ։ Պրուսի կարծիքով՝ ծաղիկը նրա ասեց Ամերիկայում տեղացի ազգերն վոխանակ ունենալ՝ քան Սպանացիները անգլուխիները։ Ռուսաստանում և Սիբիրում ծաղկային էպիդեմիան սկսուեցաւ 1605 Թուականում, և մի քանի տարուայ ընթացքում կատաղաբար մեռցնում էր մարդկիները։

Չարմանալի չէ ուրեմն, որ մարդիկ շուտով սկսեցին պատրաստել միջոցներ՝ ինչպէս առաջն առնեն կամ գոնէ նուազեցնեն այս սարսափելի չարիքը։ „Ցանկանալով մեղմացնել Թշնամուն—ասում է Ֆրանկը—որին յաղթելու մէջ մարդիկ միշտ անյաջող են գտնուել, վերջիններս յոժարական անձնատուր եղան նրան՝ գնելով և պատուաստելով ծաղիկը իրենց վերայ։“ Սա նշանակում է որ անվնաս էպիդեմիաների ժամանակ՝ ծնողները գնում էին ծաղկով վարակուածներից չարաբը և պատուաստում էին իրենց որդիների վերայ։ Այսպիսով աշխարհական պատուաստութեամբ՝ նրանք բառականաչափ նուազեցնում էին այս գարհուրելի ախտի սպանիչ զօրութիւնը։ Բայց ծաղիկը երևալով միշտ չէ հնազանդվում մարդկային ցանկութեանը—և սակաւ չէ պատահում, որ անվնաս (доброкачественная) ծաղիկը դառնում է վնասակար (злокачественная) և մահաբեր։

Պատուաստման մեթոդը— հնուանդ մարդուց ծաղիկը վերառնելու և առողջ անհատի վերայ պատուաստելու ձևը այնքան հին է, որքան և նոյն ինքն հիւանդութիւնը։ Չինաստանում, Վրաստանում և առ հասարակ արևելքում նա գործ ածւում էր ամենահին ժամանակներից ի վեր։ Չինաստանցիք բամբակի վերայ ժողովում էին ծաղկի նիւթը և կամֆորի կամ մուշկի հետ խառն դնում էին ռընդունքների մէջ և ծողնում էին մինչև բշտիկների (сыпь) երևալը։ Հնդկաստանում պատուաստումն կատարում էին բրամինները. սա նրանց մասնագիտութիւնն էր։ Արաբսինիայի մէջ, ծաղկի պատուաստութիւնը կատարվում էր չատ անգամ մեծամեծ ձևերով։ Խոշ Եւրոպայում, այսինքն Անգլիայում, ծաղկապատուաստութիւնը առաջին անգամ մտցրեց Լէդի Մօնտեգիւն։ Այստեղից պատուաստումն արագութեամբ տարածուեց ամենայն տեղ 1675 Թուականից սկսած։ Ֆրանսիայում նրա ջերմ և ճարտարասէր պաշտպանները երևացին՝ Ժան-Ժակ Ռուսսօ, Վօլտեր, Անտուան Պրեվ, Բօրդէօ և վերջապէս ինքն բժշկական Ֆակուլտետը։ Պատուաստումն (инокуляція) կատարվում էր բոլորովին նոյն եղանակով, ինչպէս կատարվում է ներկրաւոմս ծաղկապատուաստութիւնը (вакцинація)—հերնէն (лонцетъ) տալը ծայրով մտցնում էին մարմնի տակը հասած պատարի չարաբը։

Անգլիական բժիշկ Փ. Ազդինգտոնի հաշուով՝ ծաղիկը հարուածում է ամբողջ մարդկութեան կէսը. իսկ ծաղկից մեռնում է վեց մարդից մէկը. ուրեմն նա սպանում է մարդկերանց $\frac{1}{12}$ մասը։ Բացի սրանից բազմաթիւ մարդիկներ տգեղանում և այլանդակվում են, դեռ չհաշուած խլութեան և կուրութեան դէպքերը, որոնք առաջանում են ծաղկից։ Պատուաստման չնորհիւ, որը սովորաբար անենում է լաւ հետևանքներ, 300 պատուաստուածներից մեռնում է ընդամենը մի մարդ, իսկ հիւանդութեան ամենածանր տեսակը սպանում է 30 կամ 40 մարդից մինչև մէկը։

Չը նայելով այնուամենայնիւ այս մըտքերի Թուրական Թուանշաններին՝ ենօկուլացիան չը կարողացաւ համարուել կատարելապէս օգտակար և համակրելի միջոց ծաղկի դէմ, ամենից առաջ այն պատճառաւ, որ նա չէ հեռացնում ծաղկի Թոյնը, բայց աւելի տարածում է նրան, այսպէս ասած, կուլտուրայի միջոցով։ Բացի դրանից ենօկուլացիային ենթարկուած ծաղիկը նոյնպէս վարակիչ է, ինչպէս և բնականը. նա ընդունում է վնասակար և անվտանգ յատկութիւն, հետևապէս և չատանում են վարակման պատճառները և ստեղծում են ծաղկային էպիդեմիաների մշտական սերմնարաններ (բոյներ)։

Այստեղ իսկ մենք հանդիպում ենք վակցինացիայի հետ—կովի ստեանց Թարախից վերցրած չարաւային նիւթի պատուաստման հետ։ Այս միջոցը վերաբերում է չատ խորին հնութեան։ Սանսկրիտական մի չարադրութեան մէջ—Պ. Վիտէն խօսքով—կարդում

Եթե Տոլոի մեծերի խղճմտանքը 200-ական հարուստ վրացիների 500-ական ու այն փոքր սեփ. հողի հետ մի տոպրակի մեջ արած լիներ, ապա «արշավ»-ն ավելի հեշտ կլիներ։

Ի դեպ և «Ազգի» մասին։ Ինչպես հայտնի է, «Ազգը» ամսագիր է, որ հրատարակվում է Թիֆլիսում։ Ինչ է նշանակում «ամսագիր», ոչ ոք Ազգ-ից չի իմանա։ Իսկ եթե Ազգ-ը ամսագիր է, ապա ինչո՞ւ է նա ամեն օր դուրս գալիս։ Ինչո՞ւ է նա «արշավ» բռնել։ Ինչո՞ւ է նա «արշավ» բռնել։

Եթե այդ «արշավ»-ը նրանից է, որ Ազգ-ը ամսագիր է, ապա ինչո՞ւ է նա ամեն օր դուրս գալիս։ Ինչո՞ւ է նա «արշավ» բռնել։

Ինչո՞ւ է նա «արշավ» բռնել։

Ազգ-ը ասում է, որ «Ազգ»-ը ամսագիր է, որ ունի 1770 մասնաբաժնի կանոն։ Ազգ-ը ասում է, որ «Ազգ»-ը ամսագիր է, որ ունի 1770 մասնաբաժնի կանոն։

Ազգ-ը ասում է, որ «Ազգ»-ը ամսագիր է, որ ունի 1770 մասնաբաժնի կանոն։

Ինչո՞ւ է նա «արշավ» բռնել։

Ինչո՞ւ է նա «արշավ» բռնել։

Ինչո՞ւ է նա «արշավ» բռնել։

մացայ։ Ուստի չատ չ՚ուզէի զատաբանութիւնը եղաւ վերջ. 8-ին, որին պատիւ ունեցայ ներկայ գտնուելու։ Նախ քան նրա կարգացած Ճառի պնդաւոր կէտերը լսելու, արժան եմ համարում մէկ երկու խօսք նուիրել զերմանացի գիտնականին. Պ. Ֆուլքը այս տեղի համալսարանի աստուածաբանական բաժնի դեկանն է, *) և հաչակուած է նաև՝ որպէս ս. գլբքին հմուտ անձն, որը ուսումնասիրած է ասորա-բաբելական հետազօտած արձանագրութեանց հիման վերայ և երկրորդ՝ որպէս սեմական լեզուներին հմուտ անձն. նրան այս սեմ՚ասորում (վիցամսեակ) դասախոսում է երկայեցերէն և ասորերէն։ Պ. Ֆուլքը գիտէ նաև հայերէն, գրաբառ, այն չափով որ կարօղանում է ս. գլբքը կարդալ և հասկանալ. հէնց առաջին անգամ էր որ նրան ներկայացայ Թէ չէ, խոյսն սկսեց ս. գլբքի ա. գլուխը գրաբառ անգլը ասել, ինքը չատ ափսոսանք էր յայտնում, որ մեր ազգի գրականական լեզուին հետ ծանօթ չէ։ Ի հարկէ, այսպէսի մի անճառութեան հայեացքը ս. գլբքի մասին՝ մեզ ամենևս չատ հետաքրքրը պիտի լինի. որը համառօտակի առաջ կը բերենք առնելով Neun Dorpatsche Zeitung-ի № 35-ից Պ. Ֆուլքի արտասանած Ճառի բովանդակութիւնը հետևեալն է՝

Ո՞ր ասպէնան ս. գլբքը անսխալական կարելի է համարել.

Նոյն իսկ այս տեսակ հարցումի ձևը մի լանգը է չատաչ բերում Թէ ս. գլբքը, որ քրիստոնէի հաւատի և կեանքի ամենամեծ կանոնն է համարուում, ինչ տեսակ սխալներ կարող էր իւր մէջ պարունակել, և եթէ կան, ինչպիսի դէպքերում և տեղերում ենք հանդիպում։

Այս հարցումին միանգամից պատասխանելով՝ մենք մեր նպատակին հասած չենք լինել, եթէ նախապէս մեզ պարզ չը բացատրենք, Թէ ս. գլբքը ըստ իւր բովանդակութեան ինչ է, և ինչ պիտի լինի։ Շատ անգամ այն կարծիքն են եղած, Թէ ս. գլբքը ամեն մի դէպքում ներկայացնում է մի անվրէպելի հեղինակութիւն և տալիս է ամեն տեսակ բացատրութիւն գիտութեանց, ինչպէս քնական պատմութեան, բնագիտութեան և տիեզերագիտութեան մասին։ Այդ մտքով ըմբռնում են նաև ստեղծագործութեան պատմութիւնը, երբև տիեզերագիտութեան (Kosmogonie) մի տեսակը, որին պիտի ստորագրուեն բնական գիտութիւնները հետազօտութիւնները։ Բայց ս. գլբքը բնաւ այս չէ համենում. ստեղծագործութեան պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի գիտնական բացատրութիւն աշխարհի ծագման մասին. նա գլխաւորապէս ձգտում է ցոյց տալ Թէ՝ աշխարհը ստեղծուած է Աստուծոյ մարդկան համար. ոչ ստեղծագործութեան պատմութիւնը կը համարձակի, որ բնական գիտութիւնների հետազօտութիւնները ըստ իւր սրբագրուին, և ոչ բնական գիտութիւնները երաւունք ունին ստեղծագործութեան պատմութեան հիման վերայ մարտ մղելու ս. գլբքի և նրա մէջ բովանդակած Ճշմարտութիւնները դէմ։ Ամենավատ մոլորութիւն կը լինէր, եթէ Յեսուայ խօսքի „կացցէ արեգակ հանդէպ Գաբաւոնի“ հիման վերայ երկրին արևի շուրջ գառնալը ասէինք։ Ս. գլբքը Յեսուայ բերնով մեզ արեգակնային գրութեան վերայ տեղեկութիւն չէ տալիս. Յեսուն խօսած է Ճիշտ այնպէս ինչպէս այն ժամանակին ամեն ոք կարող էր մտածել և խօսել։ Ս. գլբքը հետաքրքրութիւն չագեցնելու համար չէ, նա ոչ գիտական մի գիրք է և ոչ էլ գրուցատրական մի բառարան, որից ամեն ոք իւր կամեցածը տեղեկութիւնները և ապացոյցները քաղէ։

Ս. գլբքը՝ իւր ընդարձակ գաղափարով, այն գիրքն է, որ սովորացնում է ամեն անհատի, Թէ ինչ պիտի անի և ինչ չը պիտի անի երջանկութեան հասնելու համար. դա մի ձեռնարկ է դաստիարակութեան և ուսուցման համար։ Սակայն այդ որոշումը, որ Ճիշտ չէ կարող լինել, պարզ կ՚երևայ եթէ մի հայեաց ձգենք ս. գլբքի բովանդակութեան վերայ. և դէպս եթէ նա միմիայն դաստիարակութեան և ուսուցման համար լինէր, այն ժամանակ ամբողջ ս. գլբքի առ նուազն 3/4 մասը անպէտք և աւելորդ պիտի լինէր։ Աբրեօք, ինչ տեսակ, ինչ տեղից լսատ և ուսում պիտի առնի քրիստոնէ հոգին հին կտակարանի ծննդաբանական ազգատոհմից և ուրիշ շատ մասերից. չունէը արդեօք ս. գլբքը մի այլ նպատակ, այսինքն ցոյց տալ աստիճանաբար վերակազմութեան վարդապետութեան զարգացումը։

Ի հարկէ ս. գլբքը մեզ ցոյց է տալիս Աստուածհոգի դէմքի երջանկութիւն և պարունակում է իւր մէջ Աստուածային վերակազմութեան յայտնութիւնը։ Սակայն սորանով չէ վերջանում մեր հասկացողութիւնը ս. գլբքի մասին։ Եթէ նա միմիայն Աստուածային վերակազմութեան յայտնութիւնը լինէր, նոյն ժամանակ նրան կատարեալ անսխալականութիւն պիտի վերագրել և ս. գլբքի հեղինակներին պիտի ներկայացնել որպէս Աստուծոյ հոգու մեքենայ։ Բայց որ նրանք այս չեն եղած, երևում է ս. գլբքի զանազան մասերի հեղինակների բանեցրած ոճից, ինչպէս, օրինակի համար Յովհաննէս և Մատթէոս աւետարանիչների։ Ուստի Աստուածային ներգործութիւնը հեղինակների վերայ պէտք է այլապէս հասկանալ, քան Թէ լոկ Թելադրութեամբ գրողներ։

Կան մարդիկ, որ ամբողջ ս. գլբքի հեղինակութիւնը չեն ընդունում, որով ուզում են ցոյց տալ նրա հակասութիւնը և սխալականութիւնը. բայց այդպիսիները պարզ ցոյց են տալիս հակասութիւն իրենց անձնաւորութեան դէմ, աւանց լուրջ մտածելու ս. գլբքի գաղափարների մասին, դրանք փոխանակ պայծառ հայեացք ունենալու կամ պինդ պահպանում են նրա անսխալականութիւնը և կամ բոլորովին կորցնում են իրենց հաւատը առ ս. գլբքը։ Այս անել դժուարութիւնից ընդդէմ ս. գլբքի էութեան և արժանաւորութեան, պիտի մի ապատ դուրս գանել։

Նախ՝ ս. գլբքը ոչ Թէ մանաւոր անձի համար շարադրուած է, այլ ամբողջ եկեղեցու, ժողովրդի համար։ Հաւատը ոչ Թէ ս. գլբքից է բղխում, այլ այդ գլբքի սկզբունքների վերայ հիմնուած աստուածային խօսքի քարոզութիւնից։ Ժողովուրդը կարօտ էր հաւատի կենաց կանոնին, և ահա նա այդ ունի ս. գլբքում, որպէս ամենամեծ և վերջին ապաստանարան։ Եթէ ս. գլբքը միմիայն մի երջանկացնող վարդապետութիւն լինէր, այն ժամանակ նա մի անհատի համար չափազանց շատ, իսկ ընդհանրութեան համար սաստիկ քիչ կը լինէր։ Նա սրտերից շատ աւել է, ս. գլբքը վերակազմութեան և ամբողջ պատմական վերակազմութեան զարգացման բովանդակութիւն է. նա է վերակազմութեան մեծ պատմութիւնը, նա է աստուածային յայտնութեան ամենահաստատ վկայականը (Urkunde)։ Ս. գլբքը ոչ Թէ յայտնութիւն է, այլ յայտնութեան պատմութիւն, որը կազմուած է զանազան հաստատ և հիմնաւոր մասերից, ներկայացնելով մի ամբողջութիւն իւր անբաժան մեաւորութեան մէջ։

Ո՞ր ասպէնան արդեօք այս պատմութեան կարելի է անսխալականութիւն վերագրել։ Փրկագործութեան պատմութիւնը, որ ուրատայատուած է Թէ խօսքով և Թէ գործով, բովանդակում է նաև՝ Աստուծոյ ազատ ընտրութիւնը մարդկանց մէջ և երկրորդ՝ մարդու ազատ ընդունակութիւնը աստուածային յայտնութեան մէջ. ուստի ս. գլբքը բաղադրուած է այս երկու .գործչներից, աստուածային և մարդկային—մարդկիներից չարադրուածը մարդկային զգացումով և մարդկային մտամտունքով, սակայն Աստուծոյ ներշնչուածը նրա յատկութեամբ վերակազմութեան մտքերով։ Եթէ նա մարդուց չարադրուած է, ապա ուրեմն, պէտք է որ սխալականութիւն պարունակէ իւր մէջ։

Սակայն որ աստիճան է ս. գլբքի սխալականութիւնը։ Սրա պատասխանն այն կը լինի, ինչ աստիճանի որ դա չէ շոշափում վերակազմութեան պատմութեան անձնաւորութիւնը։ Այս պատճառով վերակազմութեան յայտնութեան Ճշմարտութիւնը Ճանաչելու և դաւանելու համար՝ բոլորովին միևնոյն է, Թէ արևն է երկրիս շուրջ դառնում հեղինակի կարծիքի համաձայն, Թէ երկիրս արևի շուրջը, Թէ այստեղ մի սեմական ազգ է յիշուում, որն ասկածութիւնը ոչինչ ազգակցութիւն չէ ցոյց տալիս, Թէ ցեղերի հաշուի մէջ մի սխալ է գտնում կամ ոչ։ Ս. գլբքի հեղինակութիւնը, որպէս վերակազմութեան պատմութեան հիմնաւոր վկայական, բնաւ չի խախտուիր, եթէ մի տեղ խառնաշփոթութիւն է երևում, իսկ միւս տեղ մի վրաք անհոգութիւն և մոռացկութիւն։ Ս. գլբքը բացատրողը լանգլսն է գտնել մի բաժանում ստութեան և Ճշմարտութեան, էականի և անէականի մէջ և նա այն կարող է միայն այն ժամանակ, եթէ նա ամբողջ վերակազմութեան վարդապետութիւնը քաջ ըմբռնած և իւրացրած է։ Ով որ, օրինակի համար, Աբրահամին իբրև պատմական անձնաւորութիւն չէ Ճանաչում, նա մասամբ իւրաք վերակազմութեան պատմութիւնը մերժած կը լինի։ Բայց, կարելի է նաև գտնել ս. գլբքի տուած տեղեկութիւնների մէջ շատ բան, որ իրականութեան չէ համապատասխանում և շատ անգամ մի այլաբանութիւն է։ Ինչպէս օրինակ, „Գործք առաքելոց“-ի պատմութիւնը մեզ հաղորդում է, որ Պետրոս առաքեալը բանակից ազատուելիս՝ դրանը սպասաւորներից հրեշտակի տեղ է ընդունվում, այստեղ իրողութիւնը խառնուած է պահպանի հրեշտակի մասին եղած գաղափարի հետ։ Շատ անգամ խօսքը՝ արտայայտուած նիւթի մասին է լինում և ոչ Թէ արտայայտութեան ձևերի մասին, որոնց երաշխաւորութիւնը ս. գլբքը բնաւ յանձն չէ առնում։

Ով որ պայծառ ըմբռնած է վերակազմութեան պատմութիւնը, նա շատ հեշտ սխալ կարողանայ սահմանը գըտնել նշանաւոր և աննշան իրողութիւններին, մարդկային կողմնակի գործերի և աստուածային Ճշմարտութեան մէջ։ Եւ մենք, որ ս. գլբքի բացարձակ սխալականութիւնը չենք ընդունում, չունենք մի փոքր բարձր հասկացողութիւն դրա մասին, ինչպէս և նրանք, որոնք ս. գլբքի վերայ այնպէս են նայում, որպէս երկնքից ընկած գլբք, որի ամեն մի բառը Ճշմարտութեան տեղ են ընդունում, որով նրանք ս. գլբքի հեղինակներին կամք չունեցող մեքենայի տեղ դրած կը լինին, ինչ որ Ճշմարտութիւն ասելով նրանք հասկանում են ս. գլբքի բառացի անսխալականութիւնը։ Բայց Թէ ինչպէս աստուածային յայտնութիւնը ս. գլբքի ծագման հետ մասնակցութիւն է ունեցել, այդ մասին մենք շատ նուազ գաղափար ունինք։

Աւետարանական եկեղեցին ընդունած է ս. գլբքը, որպէս սկզբունք և ամենարարքը կանոն նրա գոյութեան համար. և ինչքան մենք առաջ գնանք, այնքան աւելի այդ Թանգագին գանձի մէջ կը խորասուզուինք և այնքան աւելի առատով կը գտանք մեր սրտի ասկ եղած գետինը։ Ս. գլբքի հետաքննութեան ջանքը մեզ բնաւ կռնատուած չէ, և չեորհիւ այս անդուլ աշխատանքի՝ ս. գլբքի արժանաւորութիւնը ևս առաւել բարձր կը նկարագրուի մեզ։ Շնորհիւ այս աշխատութեան կարող է աստուածաբանական գիտութիւնը զարգանալ և յարատևել, որովհետև ս. գլբքի միջոցով է, որ նա առանձին պատմութիւն է կազմում, որի կենդրոնը և մեր հաւատի կենաց աստղը կազմում է մխիթարն Քրիստոս։

Ս. Տ.-Դ.

ՐՕԺԻ-ՊՕՄԻՍԻ, 24 փետրվարի։ Պ. Ներենցի բժշկութը տակաւին չեմ տատցել, չեմ կարդացել՝ բայց բաւականին տեղեկութիւն տատցայ „Նոր-Դար“-ից և „Աբձագանք“-ից՝ Թէ ինչն կարգելի հեղինակը իւր գաղափարները և իւր կաթողիկոսացուն ժողովրդապահանձնելու համար առաւել ուշիղ Ճանապարհ չէ ընտրել. բազմաթիւ ընթերցողների շրջան ունեցող լրագրի միջնորդութեան չէ դիմել։

Հեղինակի վկայութիւնը ակամայ մեր մտքին է բերում մեր լրագրատեսներին ոմանց հրատչերը Թէ՝ „ամեն մարդ, որ ընդունակ է լրջութեամբ խորհրդածել ազգային խնդիրների վերայ, Թող ցոյց տայ իւր հաւանական կաթողիկոսացուն և բացատրէ՝ Թէ ինչն այս կամ այն մարդը առաւել արժանաւոր է Լուսաւորչի Գահակալը լինելու“...

Այո, մեր մտքին ենք բերում և ծիծաղում ենք. որովհետև այդ խօսքերը շարող մարդիկ մոռանում էին, որ անկեղծութեամբ խորհրդածել կամեցողների մտքը բռնաբարուած էր։ Խօսքը, խորհելը ազատ էր՝ եթէ լոմբագրի կանդիդատի ջատագովելու համար էր։

Մի ամբողջ տարի անցաւ, որ կաթողիկոսական խնդրի հետ՝ հաւանական կաթողիկոսացուների անուններ մամուլի քննութեան առարկայ եղան։ Յիշեցէք Հայկակի ընդարձակ, բայց գեղեցիկ նամակը, որ անցեալ տարի „Մշակ“-ի մէջ տպուած էր։ Ուսկից ընթերցող հայ հասարակութիւնը այդ նամակի մէջ առաջին անգամ իմացաւ այն անուններըՙ որոնք Պօլսոյ ազգային ժողովի չրջանների մեջ հաւանական կաթողիկոսացու ընդունելու էին։ Գրանք չորս հոգի էին. Վարժապետեան Ներսէս. Խրիմեան Մկրտիչը, Տեղապահ Մաքարը և Մուրադեան Մելքիսեդէկը։

Պ. Հայկակը յիշելով այս անուններըՙ սկսել էր լուրջ խորհրդածութեան առնել այն բանիմանութիւնները, որոնք այս կամ այն կամ եկեղեցականի կանդիդատութեան հիմքն էր։ Բայց նա քննելով որպէս կաթողիկոսացու՝ վարժապետեան Ներսէսի և Խրիմեանի անձնական յատկութիւնները, ամենեւին լուսութեան էր տուել՝ Թէ ինչ սկզբունքների և ինչ բարեմասնութիւնների համար տեղապահ Մաքարը և Մելքիսեդէկ Մուրադեանը տաճկաստանցիների վստահութիւնը գրաւել են։

Իրաւացի համարելով, որ պ. Հայկակը վախճ չէ տարել այս մնացած երկու անձնաւորութեանց մասին ու բարոյական պատիերը ծրագրելու և հանդէպ հանելու այն կողմերը ու յատկութիւնները, որոնք Թէը ու դէմ կարող են վկայել սրանց հաւանականութեան՝ մենք կամեցանք այս պակասը լրացնել։ Մեր մտքերի ու զգացմունքների յայտարար ընտրեցինք „Աբձագանք“-ը —որպէս օրգան, որ մեր համակրութիւնը գրաւել էր, մանաւանդ կաթողիկոսական խնդրի նկատմամբ։ Մասնաւոր տեսութեան առնելով կաթողիկոսական խնդրի էական կողմերը և հաւանականութիւն տատցողների բարոյական ու մտաւոր արատները՝ մենք մանրամասնաբար քննել ու վերլուծել էինք Հայկակի բաց Թողածը—Մակար սրբազանին և Մուրադեան Մելքիսեդէկին։ Երկուսի վերայ ձենք հաստատ ու Ճշգրիտ տեղեկութիւն ունէինք։ Մինը՝ ինչպէս մեր ուսուցիչ-դաստիարակ, միւսը՝ ինչպէս խորհեմ խորհրդական Մատթէոս Ա.-ի, որի մօտ գրագրութիւն արած ժամանակիս՝ մինջոց ենք ունեցել այդ անձի—Մակարի բարեմասնութիւնների ու սրակաստութիւնների հետ ծանօթանալու։ Մենք հետևել էինք սր. Հայկակի պատճառաբանական ոճին։ Մեր ցոդուածը բաւական ընդարձակ էր և բաժանուած երեք մասի։

„Աբձագանք“-ի լոմբագրութիւնը բարեհաճել էր մեր աշխատութեան միմիայն առաջին մասը տպել առաջնորդող ցոդուածի տեղ։ Մնացած երկու մասը՝ չը գիտեմ ինչի՝ լոմբագրութիւնը Թագցրեց։ Տեղեկութիւն չըստացայ. և ես ալ. Ներենցի հետ նրաւունք ունէի ասելու՝ Թէ ինչի այնքան ի զուր վատակեցի, ջանք արի... Ինձ առաւել մխիթարական կը լինէր՝ եթէ ամենևին տպված չը լինէր.—գոնէ կ՚նմանայի կամ կը կարծէի, որ մի անյարմար բան եմ գրել և ինքս ինձ կը մեղադրէի։ Բայց ցոդուածիս առաջին մասի տպագրութեան մէջ եղած քմահաճ սրբագրութիւններից ըմբռնեցի՝ որ պ. Ծովհաննէսեանի օգնականը վճռել է մի խօսք անգամ չը տպել՝ եթէ այդ խօսքերը Մակարի կամ Մելքիսեդէկի համար հաճախրական յատկութիւն ունէին։ Մեծ վիշտ էր մեր սրտի համար, որ խնայելիս „Աբձագանք“ էր քննարարել մեր մտքի, զգացմունքի և խորհրդածելու ազատութիւնը *)։

„Աբձագանք“-ն գիտենք որ նախ Ներսէսական է դառել։ Բայց արդեօք նրաւունք էր զրկել ուրիշին իւր հայեացքը յայտնելու։ Մենք վաղուց գիտենք՝ որ Ներսէսն է Գէորգ IV-ի յաջորդը **)։ Բայց ով նրաւունք ունէը մեզ արգելել ասելու Թէ՝ միևնոյն մարդը՝ որ ազգային ներկայ երկվեցութեան պարագայից մէջ ամենայարմարը էն է Լուսաւորչական աթոռի գահակալ լինելու՝—դա Մուրադեան Մելքիսեդէկն է, որի համար հաւասար նրաւունքով և տաճկաստանցիք և ռուսաստանցիք կարող են ասել՝ Թէ մ ե ր ն է, ինչպէս Հոմերոսի համար եօթն քաղաքներ ասում էին։ Մեր կարծիքով՝ կաթողիկոսական խնդրի ներկայ պարագաներից ամենադժուարլուծն այն է՝ որ տաճկաստանցին կուզէ ն ե ր ն ընտրել, ռուսաստանցին իրը։ Մնացած խորը պատճառաբանութիւնները դիմակ են՝ որ գիտութեամբ կամ անգիտութեամբ քօղարկում են այս նպատակը։

Տեսնում էք որ տեղ չը կայ զրելու։ Իմացաք և, որ մենք մեր պարտքը կատարել ենք կատարել. բայց բռնաբարել են մեր յօժարութիւնը. Նորից ձեռնարկելը ուշ է։ „Նոր-Դար“-ը մի տարի ուշացաւ։

Բժ. Աբամեանց։

---

*) Պ. բժիշկ, մեր երկրումն էք ապրում և այդքան միամտութիւն։ Խմբ.

**) Ահա մի բան, որ մենք չը գիտենք։ Խմբ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

„Times“ լրագիրը մի յօդուած է տպել Ռուսիոյ արևելեան քաղաքականութեան մասին, որով հաստատում է Թէ՝ Ռուսիան աննկատելի կերպով շարունակում է իւր պատերազմը Թիւրքիայի հետ, մտնելով Փոքր-Ասիայի մէջ։ Լրագրի կարծիքով, այսուհետև Ռուսիոյ գործունէութեան ասպարէզը կը լինի Հայաստանը։ Խօսելով Մեսրի Ռուսիոյ հետ միանալու մասին, գրում է, որ Ռուսիան յանկարծակիով իւր

*) Պսոֆէսօրների մի բաժնից տարին մի անգամ ընտրուած գլուխը այդպէս է կոչվում։ Խմբ.

ձեռքի մէջ այդ Պարսկաստանի և Աֆղանիստանի բանալին, իբր թէ անպատուել է Անգլիային և այնպէս ապացուցել թէ համարձակութեամբ և համարձակութեամբ է կատարել այդ գործը, որ Անգլիան չկարողացաւ նկատել այդ անպատուութիւնը։ Իսկ ինչ վերաբերում է Ֆրանսիական օրգաններին, նրանք առ հասարակ գրգռուած են Ռուսիոյ դէմ, նրա միջին Եւրոպիոյ պետութիւնների հետ միանալու համար։

—

„République Française“ լրագիրը յանձն է առել բացատրելու երեք կայսրների դաշնակցութեան նշանակութիւնը, որը եթէ հաւատանք աւտորիական մամուլին, շուտով կայանալու է։ Լրագրի ստութեամբ, այդ դաշնակցութիւնը ինքը Ռուսիան է, որը կամայ և ակամայ հրաժարվում է Բալկանեան Թերակղզուց և գլխում է, Գերմանիոյ օգնականութեամբ, մտնելու դէպի Ասիոյ մէջին երկրները։ Ֆրանսիական լրագրի կարծիքով, այսուհետեւ դուրս է գալիս այն զարմանալի վտասը, որը չէ նկատում միայն անգլիական մամուլը, այն է թէ հէնց որ Ռուսիան սկսում է շարժել դէպի Ասիա, Եւրոպայում այլ ևս ոչ ոք չէ մտածում պատերազմի վերայ, իսկ երբ դադարում է այդ շարժումը, բոլորն էլ ըսկսում են խօսել պատերազմի վերայ։ Ֆրանսիական օրգանի կարծիքով, Աւստրիան, Սալօնիկի վերայով, ուր նա մտադիր է մտնելու, կը սկսի, չնորհիւ Գերմանիոյ օգնութեան, տիրապետել Միջերկրական ծովի արևելեան կողմերին, իսկ Ռուսիան կ'տիրէ Կաթուլին։ Ինչ պիտի անէ ուրեմն Անգլիան, հարցնում է „République Francaise“ լրագիրը, որ կարողանայ ազատուել այդ երկու սէրութիւնների ձնշումից, որոնք սպառնում են յափշտակելու Սուէզեան ջրանցքը և Հնդկաստանը։ Նրան, Միջերկրական ծովի մէջ հարկաւոր են դաշնակիցներ, ասում է նոյն վերջաբանութեան մէջ վերոյհիշեալ լրագիրը. անգլիական մինիստրութիւնը ձգեց Բիսմարկի գլուխը Խաւսիային, իսկ Ֆրանսացիներին արտաքսեց Եգիպտոսից։ Ուրեմն այս բոլորից երևում է, որ միայնն ասլագայ կայ Ռուսիոյ և Աւստրիոյ համար։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

(ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ)

1 Մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Երէկ մեծ իշխան Սերգի Ալէքսանդրովիչը վերադարձաւ արտասահմանից։ Նորին Բարձրութեան պատիւ Հեսսենի Եղիսաբէթ իշխանուհու հետ կլինի յուլիս ամսում։

ՆԻԿՕԼԱԵՎ. Փետրվարի 28-ին սկսուեցաւ նահագնացութիւնը Բուդի և Պենեպրայի Լիմանի վերայ։ Երէկ Օչակովից եկաւ Նիկօլաեվ մի շոգենաւ բեռներով։

«Ռուսական ընկերութիւնը» նահագնացութիւնը Նիկօլաեվի և Օդեսսայի մէջ կ'սկսի Մարտի երկուսին։

ԲԱԳՈՒ. Մօտ օրերումս Թիֆլիսում կը քննուի ամերիկացի Ցվեդլեի առաջարկութիւնը, որով նա կամենում է շինել երկու նաֆթի անցք, Բագուից մինչև Սև ծովը և Բօսպոր—Վլադիկավկազի ճանապարհը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Այսօր հանգուցեալ Կայսեր մարտիրոսական մահուամբ մեռնելու օրը, Ս. Պօղոս Պետրոսի մայր եկեղեցում, ժամի երկուսին նշանակուած է կատարելու հանդիսաւոր հոգեհանգիստ, իսկ առաւօտեան 8 ժամին բոլոր զօրքերի մասերում հոգեհանգիստ կատարուեցաւ։ Թատրոնները փակուած են։

Երէկ Ծովային վարչութեան գլխաւոր եկեղեցում, կատարուեցաւ Ծովապետ Լեսովսկու հոգեհանգստեան պատարագը։ Ներկայ էին՝ Թագաւոր Կայսրը, Մեծ իշխանները և բարձրաստիճան անձինքները։ Հանգուցեալին թաղեցին Նովոդեվիչի վանքում։

Երէկ երեկոյեան Վասիլիեվսկի կղզու վերայ այրուեցաւ Բօրիսովսկու Թղթի գործարանը, ուր բանում էին մօտ 500 հոգի

«Journal de St.-Pétérsbourg» լրագիրը հերքում է այն լուրը, որ իբր թէ Ռուսիան մտադիր է նըշանակելու Աֆղանի Էմիրի մօտ մշտական ռուսական ներկայացուցիչ։

ՄՈՍԿՈՒԱ. Երէկ փակուեցաւ Թուչնասպանների Հանդէսը։ Վճռուած է տալ 10 ոսկի և 39 արծաթի մեդալներ, բացի դրանից, բրօնզի մեդալներ և գովասանական թերթեր։

ՓԱՐԻԶ. Փարիզի դուքսը, Լիոնում վտանգից ազատուելու պատճառով, շատ շնորհաւորական նամակներ ստացաւ։ Մարշալ Մակմահօնը այցելեց դուքսին, որը այժմ գտնվում է Կաննում։

ԿՐԻՍՏԻԱՆԻԱ. Լրագիրները հաղորդում են, որ Թագաւորը հաստատեց պետական դատարանի վճիռը, որով նախագահ—մինիստր Սեվմերը արտաքսվում է պաշտօնից։

ԼՕՆԴՕՆ. Անգլիական բանկը դիսկօնտը պակասեցրեց մինչև 3%։

ՍՈՒԱԿԻՄ. Այսօր լուսաբացին անգլիական զօրքերը շրջապատեցին Օսման—Դիգմին և տիրեցին բոլոր ամրութիւններին։

—

Մարտի 1-ին նեբքին 2-րդ վոլոսթեան վիճակահանութեանը գլխաւոր գումարներն ընկան հետեւեալ բիլէթներին։

Սերիա 407	№ 31	10,000
„ 10,174	№ 51	
„ 1,237	№ 41	
„ 15,383	№ 46	8,000
„ 16,315	№ 5	
„ 15,925	№ 24	
„ 15,075	№ 18	
„ 7,236	№ 34	
„ 321	№ 8	5,000
„ 8,483	№ 5	
„ 10,195	№ 41	
„ 17,400	№ 39	
„ 15,421	№ 5	
„ 18,750	№ 27	
„ 13,409	№ 1	
„ 9,386	№ 10	
„ 2,541	№ 8	1,000
„ 18,743	№ 40	
„ 4,684	№ 14	
„ 16,071	№ 31	
„ 14,322	№ 43	
„ 13,531	№ 5	
„ 3,536	№ 26	
„ 765	№ 26	
„ 3,952	№ 3	
„ 15,654	№ 26	
„ 216	№ 33	
„ 9,592	№ 5	
„ 9,348	№ 48	
„ 17,144	№ 18	
„ 11,848	№ 8	
„ 17,254	№ 6	
„ 588	№ 34	
„ 14,530	№ 39	
„ 17,310	№ 8	
„ 6,025	№ 37	

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Թիֆլիսի Հրապարակի վերայ վաճառահանուող ապրանաց ընդհատակի գները։ Մարտի 2-ին։

—

ՅՈՒՏՆ.—Դուռնուկի. պուդը 95—1 ր. 5 կ.
„ Գանձակի „ 80—90 կ.
„ Շորագալի „ 95—1 ր. 5 կ.
„ Ղազախի „ 65—70 „
„ Երևանի „ 85—90 „
„ Նուխայ „ — —

ԱԼԻՒՐ.—Բէստեով (Рейникъ)
քաշն . . . . 14 ր. 25—50 „
„ կօժախովի քաշը 16 „ 50 — 75 կ.
„ Հախվերդևանի
№ 0 քաշը 12 ր. 50 կ.
„ 1 „ 11 „ 25 կ.
„ 2 „ 8 „ 75—9 ր.
„ 3 „ 7 „ 75—8 ր
„ 4 „ 6 „
„ Եղբայրք Սհաթզադեաննեի
№ 1 քաշը 10 ր.
„ 2 „ 8 ր.
„ 3 „ 7 ր.
„ Դուռնուկի . պուդը 1 ր. 10 —15 կ.
„ Գանձակի , . „ 1—1 ր. 5 „
„ Շորագալի . . „ „ 1 ր. 10—1½ կ.
„ Խառն տեսակները „ — 85— 95 „

ԳԱՐԻ.—Սպիտակը. . . . „ 62—65 կ.
„ Սևը . . . . . „ 65—67 „
Գարեջրի համար . . . . 67½—70 „

ԲՐԻՆՁ. աքսելայ . . . . „ 2 ր. 60—80 կ.
Նուխայ „ . . . . „ 1 „ 55—65 „
„ Խառը տեսակները „ 1 „ 45—50 „

ԱՂ.—Ռուսական . . . . պուդը 67½—70 կ.
„ Վուլկի . . . . . „ 1 ր. 7½—10 „
„ Կապրտանի . . . . „ 72½—75 կ.
„ Բազուի . . . . . „ 27½—30 կ.

ԻՒՂ.—Օդեսայի . . . . „ 11 ր. 35—40 կ.
„ Նիժեգորոդսկի „ 12 ր 75—80 կ.

ՁԻԹ.—Շերբաթաի 8 ր. 70—80 կ.
„ պաղաչնօյնի (արևածաղիկ) սպառ.
„ սերմ 4 ր. 40 կ.—50 կ.
„ Ֆիլիպպոզի 11 կ.—11 ր. 10 կ.

ՇԱՔԱՐ.—Բրօդսկի . . . պուդը 7 ր. 52—55 կ.
„ Բրօդսկի ճաշիի 7 ր. 45—47½ „
„ Մանրագլ. 6—8 ֆ. „ 7 ր. 90—8 ր.
„ Կարասճ . . . . „ 8 „ 10—15 կ.
ՇԱՔԱՐԱԻԱՁ. Օդեսայի պուդը 5 ր. 95—6 ր.
„ Մարսելի „ — —

ՏՐԱՆԶԻՏ ՇԱՔԱՐԸ. . . պուդը. 7 ր. 60 կ.

ԿՕՖԻ.—Մօքքօ—պուդը. 22 ր.—50 — 23 ր.
„ Ռիօ „ „ 14 ր. 50 կ.—15 ր.
Տրամադրութիւնը շարժուն է։

ԹԷՅ.—Կ. և Ս. Պօպով Եղբարց (К. и С. Бр Поповы).
„ 1 ր. 40 կոպէկանոց.
„ 1 „ 60 „
„ 2 „ — „
„ 2 „ 20 „
„ 2 „ 50 „
500 բուբլուց աւել դրամ. Համար զեղչ % 10
10-ից մինչև 500 ր. „ „ „ % 9
Քառորդ ֆունտանոցները միևնոյն դրամների համար . . . . . զեղչ % 7—8.

ԹԷՅ.—Պօպով Եղբարց. (Бр. Поповы) միևնոյն գնահատութեան համար զեղչ % 21—22
„ К. и С. Պօպովի եաբլկէի նմանապատիկ տեսակի միևնոյն գնահատութեան համար զեղչ % 15
Վիրջին երկու տեսակները քառորդ ֆունտանոցը նշանակած զեղչից % 1—2 պակաս։

ԾԽԱԽՈՏ.—Կուշնարևի—Պապիրոս 1-ին և 2րդ տեսակի համար զեղչ % 22—23 կ.
„ 3 „ „ „ 6½—7 „
Թամբաքու.—2 բուբլիանոցի համար զեղչ. % 16½—17
1 ր. 20 կոպէկանոցի համար % 15—
80 կոպէկանոցի — „ 8½
40 „ „ — „ 6
„ Ամօրով — Պապիրոս 1-ին և 2-րդ տեսակ % 21—22
„ „ „ 3-րդ տես. % 10—
„ „ Թամբ. 2 բուբ. զեղչ. % 15
„ „ „ 1 ր. 20 կոպէկ. % 16
„ „ „ 80 կոպէկան. % 9—
„ „ „ 40 կոպէկան. % 9—
„ Բաղաջևանց—Պապիրոս տես 1-ին % 25
„ „ „ 2-րդ „ % 20
„ „ „ 3-րդ „ % 15
„ „ Թամբաքու 1-ին տեսակ % 25
„ „ „ 2-րդ „ % 20
„ „ „ 3-րդ „ % 15

ՊԱՂԼԵՂ (շիր 8—9 վտակ 2 ր. 25—30
„ 17—18 „ „ 2 ր. 20—25 կ.
Կաուֆփոլ զեղչն 2 ր. 20—25 կ.
Սոդա (Soude caustique
70—7 %-ոց 3 ր. 15—20 կ.
ԿԻՆԱՓՕՆ.—(Դարչին) . . . 11 ր. 35 -40 կ.
ՊՂՊՂԵՂՆ.—Սինապփօղի . . . սպառաւած։
„ „ միւռ տեսակները 16 ր. 90—17 ր.
ՆԱԻԹ.—1-ու դասական գործածական 30—32½ կ.
„ 2 „ „ „ 25 — 28 „
„ Մինչևնոյն գործածական „ 55 – 60 „
ՄՈՄ.—Կիլոտովինկով . . պ. 12 ր. 90—95 կ.
„ Օդեսայի . . . . . „ 10 „ 40—45 „
ՄՈՄ.—Տօլչկի գործարանից. 4-նոց. 5-նոց. 6-նոց. 8-նոց. . . պուդը 12 ր.
Փոխոսութիւն առ այժմ չկայ։
ՍԱՊՕՆ.—Տօլչկի գործարանից։
„ 1 տեսակը պուդը. . . . 5 ր.
„ 2 „ „ . . . 3 „ 60 „
„ 3 „ „ . . . 2 „ 80 „
„ Մարմիրօնի „ . . . 4 „
„ Մանրը, փուռնատոյը և կէս փուռնատոյը 4 „ 50 „
ՃԱԳԱՐ.—Զանազ. տես. 3 ր. 60 — 70 կ.
„ Հալած . . . . . 5 ր. 40—60 կ.
Տեսակները շարժում են։
ՁԱՄԻՉ.—(Սառա) Պարսկաստանի
մեզոմկինը պուդ. 3 ր.—3 ր. 5 կ.
„ „ քաշկինը „ 2 „ 40—45 „
ՆՈՒՇՆ . . . . . 12 ր. 50 —60 կ.
ԿԱԳԻՆ (Խեչ) . . . . . 3 „ 65—70 կ.
ՕՂԻՆ.—Վաճ. տակառով . . % 7¾—
ՍՊԻՏՏՐ. — „ առանց տակառի. % 8¾—9 կ.
ՆԱՓԻՂՅ. հաֆթայ (Java) 170 կ. 8 ր. 50 կ.—9 ր.
„ մհսանի (Messine) 200-ը 7 ր. 50 կ.—8 ր.
ԼԻՄՕՆ 320 հատանոց 9 ր. 50 կ.—10 ր.
ԲՈՒՒՐԹ.—Թուշի-վրաց աշնան կոտրած . . . . 6 ր. 60—70 կ.
„ Թուշի-վրաց գարնան կոտրածը . . . . . — — —
„ Թարաք. աշնան ոչխարի „—4ր 25—50կ.
„ Թարաք. գարնան. . . . 6 ր. 40—50 կ.
„ Գանձակի „ գարնան 4 „ 50 „ 60 „
„ Ղազախի—սպառուած — —
„ Շիրաք „ — —
„ Ղարաբաղի „ — —
„ Նուխայ—գարնան — —
„ „ աշնան — —
„ Խորասանի „ — —
ՄՈՐԹ.—Այծի—(Մարտենի համար)
զոյգը . . . . . 1 ր. 40—50 կ.
„ „ (Դարաղնեցի համար մեծն) զոյգը . 2 ր. 60—75 „
„ Ոչխարին (Մարս. համ.) պ. 5 ր. 5 ր.—5 կ
„ „ (Օգես. համ.) զոյգ.1 „ 70 կ.—75 .
ՏԱԻԱՐԻ ԿԱՇԻՆ . . . . . 8 ր. 8 ր.—20 կ.
ՄԱՐՍԷԼԻ Tampier է (Տանպիեռ) կաշին կանեփով . . . 39 ր.—39 ր.—25 կ.
„ „ Cheysson է (Շէյսոնէ) կաշին կանեփով . . . . 36 ր.—36 ր.—25 կ.
ԿԼԱՑԿԻ. Ոչխարինշան կամ միւս տեսակները . . . . . 18 ր. 40—45 կ.
Անցեալ համարում կլսվի գինն փոխանակ տպելու 18 ր. 40—45 կ.
Սխալմամբ տպուած էր 17 ր. 40—45 կ.
ՕՂԻՆԴՐ. (Նշաղիը) . . . . . 8 ր. 80 — 90 կ
ԲԱՄԲԱԿ.—Երևանի-ամերիկայի սերմից . . . . . սպառուած
„ Երևանի-Գարադիօղլի սերմից . . . . 5 ր. 70 կ.—6 ր.
ԲՈՅՈՅ.—Նուխայ՝ սպառուած — —
„ Իմերեթի. նուռայ. պուդ. 27 — 28 ր.
ԹՂԼ.—Կախեթի. սպառուած — —
„ Իմերեթի. փոքր քանակութեամբ . . . . . 90 —95 ր.
ԼԱՍ.—Բոլոր տեսակները էս սպառուած։
ԸՆԿՈՒՄՉԻ ՈՍՏՂ. (Նապղիա) պահանջը շատ. զինը սաստիկ ընկած. պահանջ չը կայ։
ԼՈՒԻ ՍԱՂԱԿ.—Ձախտանոց Թոյլ Պահանջը շատ։—Գինն է 1 ր.—1 ր. 50 կ.
ՈՍԿԻՆ. Պօլիմիերբլան . . . 8 ր. 45—47 կ.
Տաճկահայ լըբան . . . . 9 „ 25—27 „
ԱՐԾԱԹՆ. Բուբլանոց . . . . 1 „ 40 —42½
20 կոպէկանոց . . —23½ կ
ԹԻՖԼԻՍԻ Ա.ու ապ. բանկի ակցիան 255—257 ր
„ Քազաքային „ „ 70—72 „
„ Ազնուականների Կալուածական Բանկի զրաւական տոմսը . . . . .
(Закладной листъ) 78 — 79 „
ՔՈՒԹԱՅԻՍԻ. Բանկի նոյն տոմսը 79 – 80 „

ՄՕՍԿՈՒԱՅԻ ԲՕՐՍԱՆ, վեցերվարի 25-ին.

—

Բամբակ.—Երևանի—Ամերիկայի սերմից պատրաստ կանեփով 9 ր. 75 կ.
„ պարագիօզ „ 8 ր. 8 ր. 20 կ.
„ Մազանդարանի, 7 ր.
Մի տարի ժամանակի վարկ
„ Բախարայի 7 ր. 30—35 կ. կանեփ.
ԹՂԼ.—Նուխայ. պուդ. . . . . 235—237 ր.
„ Կախեթի „ սպառուած.
„ Իմերեթի „ սպառուած։
ՆՈՒՇ. — Վաճառվում է պ. 12 ր. 75 —13 ր.
ՁԱՄԻՉ —(Սառա) „ „ 4 ր. 30—40 կ.
„ Գարմեան „ „ 4 ր. 50—60 կ.
Ս ա ա ռ. (ճոյռ) 15 վիճշտկանոցը 10 կ.
„ 16 „ 11 „
„ 18 „ 13 „
„ 20 „ 14 „

ՄԱՐՍԷԼԻ ԲՕՐՍԱՆ վեցերվարի. 19-ին

—

ԲՈՒՐԹ.—Թուշի վրաց գարնան կոտրած.
„ „ . . . . B. 1 ֆր. 30 ս.
„ „ . . . . B. S. 1 „ 10—
„ „ . . . . B. O. 1 „ 50—
„ „ . . . . G. C. 1 5—
„ „ . . . . M. 80 82
„ պահանջը շատ սակաւ։
„ աշնան կոտրածը A. O. 1 ֆր. 60 ս.
„ „ . . . . B. O. 1 „ 55—
„ „ . . . . B. . . 1 „ 30—32½—
„ „ . . . . B. S. 1 „ 10—12½—
„ „ . . . . A. . . 1 „ 37½—40—
„ „ . . . . G. C. . 105 — —
„ „ . . . G. C. A. 1 „ 20— —
„ „ . . . . M. „ 90— —
„ պահանջը մինչև քանակութիւնը։
„ Թարաքամա գնահատն սեսակները։
„ գաշնան կոտրածն . . . B. 95—100 ս.
„ „ „ G. C. 95—97½ ս.
„ „ „ M. 95 97½ ս.
„ „ „ M. 65—70 ս.
„ աշնան կոտրածն . G. C. O. 97½—100ս.
„ „ G. C. A. O. 135—137½ ս.
„ Ղարաբաղի—Թարաքամա։
„ „ գարնան տեսակ. 85—90 ս.
„ Նուխայ—գարնան — 85—90 ս.
„ „ աշնան A. 130— ս.
„ „ „ B. 117½— ս.
„ Խորասանի. B. 155—160 ս.
„ „ մինացած տես. 125—130 ս.
„ „ սովորական զեղչ. 1½—2% ս.
ԲՈՅՈՅ.—Ղարաբաղի և Նուխայ. մինչեվնայով խեղդածն։
“ ¾—5 արշինանոց առուղ 8 ֆ. 8 ֆ —25 ս.
„ Նոյն տեղերինը—արուղ չորացրած 7 ֆ. 7 ֆ.—25 ս
„ Ճամիչալ . . . 3 ֆ. 75—80 ս.
„ Չալաչ . . . 2 ֆ. 75 – 80 ս.
ԹԽԼ.—Նուխ. և Ղարաբ. պոճոլ. 42½—45 ֆ..
ԼԱՍ.—Ռաշտի . . 6 ֆ. 75 ս.—7 ֆ
„ Խորասանի . . . 3 ֆ. 3—25 ս.
„ Նուխայ . . . 10 ֆ. 10—50 ս.
ՖՐԻԶՕՆԵՏ. Նուխայ . . . . 1 ֆ. 75 ս.—2 ֆ
սովորական զեղչ. % 1—1½.
ՈՂՅՈՒՐԻ ՄՈՐԹ. . . . . 97½—100 ֆ.
ՏԱԻԱՐԻ հաշի . . . . 150—155 ս.
ԱՅԾԻ ՄՈՐԹ 12 հասը . . . . . 32—36 ֆ.
սովորական զեղչ. % 4
ԼՈՒԻՒ ՅՂԻԿ.—Վաճառվում է 100 քիլօն 45—50 ֆր. զեղչ % 4
Սահմանի ընկած է. պահանջ չը կայ։
ԸՆԿՈՒՄՉԻ ՈՍՏՂ. Յծնը սեսակները մինչև մինչև նոյն ձևով անվաճառ։ Ընկած սեսակը . . . 150—160 ֆր.
զեղչ. % 2
Շաքար . . . 64—64½ ֆ.
առհասարակը սասկի Թոյլ են։
Եգիպտացորէն (кукуруза) Փոթիի 13 ֆ. 75 ս.—14 ֆ. զեղչ % 1

Խմբագիրը—Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Փետրվարի վերջին ուղղևորուելով դէպի սահմանները Ախմաի հետ Թաւրիզ, ներկայացուցիչները տալու պետութեան Թեհրանում, մտադիր եմ մի մի ներկայացուցիչ տալ Քարվանսարայում, Երևանում, Նախիջևանում և գուցէ Ագուլիս—իմ հայրենիքում։

Թիֆլիսում մշտական համբ դերասան Սաֆրազեան։

6—4

Հայոց հետ բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է յարգելի անդամոց և նրանց, որոնք ցանկանում են գրուել անդամ ընկերութեան, չնորհ տեսել ընդհանուր ժողովը կիւրակի, Մարտի 14-ին, առաւօտեան 11 ժամին, Ս. Գայանեան ուսումնարան, ասելիք հաշիւները և ընկերութեան եղիւռից նախահաշիւը քննելու և հաստատելու։

3—3

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го Марта 1884 г. Տպարան Ս. Ս. Մխիթարեանց ա. № 12. Типографія А. А. Михѣльсона Гол. пр., д. № 12